

ման. Ղաշտերն են լեցուած ամառուան բուրուճակները ջերմիկ արեւով. կը բարձրանայ ու կը ցածնայ յուշիկ յուշիկ երասխի շոգին փռուած ոսկեթել ծածկոցի պէս լեռներու ծայրին, ձորերու խորը ոսկեղէն մաղով կը ցանէ հանդարտ հառազայմ ու բոյր: Ու կը զգամ հոգւոյս մէջ մի անսովոր խլորտով ու փոռորիկ մը յուզումի, ո՛վ հայ-րենիքդ իմ դու հազար անգամ գեղեցկացած այս հայելիին մէջ, դու բիւր անգամ ազնուացած ու սրբացած ինչպէս զմբեմներուդ տակ խոնարհող հակասոները սըրբութեան կանթեղէն: Հաւատացած եմ գեղեցկութեանդ անխափութեան, ծինոտ լեռներուդ վեհապանծ տոկիլին, ղաշտերուդ մէջ փռուած երկնորանգ մայիսներուդ, ինչպէս մեր ծաղկած մագաղաններուն հրնաբոյր էջը: Բայց աւանդ որքան աշխարհն է սիրուն այնքան եւ բնակիչներն են անբախտ: Խաւարէս լուսին, որ փոխանակ իմ հայրերուս զրահներն արծաթեղու կու գաս իմ խոխորուած եղբայրներուս կիսանաղ ոսկորներն որոնելու:

Վրդովուած է այժմիկ բանաստեղծի հոգին ինչպէս մեր գարնան անձրեւուտ երկնքը: Երբ կը կարդամ այն մուսլէջերը, ով Աստուած իմ, կայ արդեօք աւելի տըխուր աշխարհ մը քան մերինը: Կայ աւելի հզօր զգացում տխրութեան եւ խորութեան մտածումնքի: Հայ մարտիրոսագրութեան հեղինակը եմէ մարդկային է իր նկարագրութեանն երկը, աստուածային է ցաւերու մէջ:

Ու մենք գիտակից ենք այդ քառասուն երկար տարիներու զոհագործումին արուեստի եւ գեղեցկութեան ազգային բազմիւն վրայ: Քառասուն տարի յուզուած եւ լացած, ըմբատացած մեր սեւ հակատագրին դէմ անմահ հեղինակին հոգեխաղ լարերով անզուսպ եւ հարազատ է մեր հիացումը, իբրեւ հայ, իբրեւ ցեղիս տառապանքը մարմնացնող հոգի: Իբրեւ գեղարուեստի քուրմը դէպ ի անբախտ հայրենիքիս արժանաւոր զաւակը: Ղարբուրու յաւիտեան կանուկեան մէջ յարգանք քեզ:

Հ. ՎԱՅԱՆ ՅՈՒՆԱՆԻՍՅԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Շար. տես Բազմավէպ 1930 էջ 152)

Թ. Մահմետական թին ներքեւ: — Ռուս բրնձանց զահէ տապալած է 1375ին ի վեր, հայ հին ազնուականութիւնը ջրուած կամ ցրուած, և հայ ազգն ու եկեղեցին կը զանուխն այլադեմից քմահաճ վարչութեան ներքեւ, որ կ'ենդանէ հայ-բազմական ընտրութեան հին կարգերն ալ: Միւր թագաւորաց կամ իշխանաց փոխան՝ կղերին քով կը նստի հիմայ ժողովուրդը, թէպէտ ոչ միշտ, նշանակելու հայ-բազմութեւն և աղոյմէ վերջ եւս՝ ու յաճախ գոյն առանց աղոյնց ալ՝ օտար բռնաւորներն են որ կը հաւանին կամ ուղղակի կը կարգեն հայ եկեղեցւոյ պետերն՝ առանց որ և է կանոնի ու սահմանի: Այս պատճառ

առաւ ստիպուած ենք սոյն շրջանիս յատկացնել առանձին էջ մը:

Աղթամարայ կաթողիկոսութիւնը, որ իւր հիմնութիւնն ի վեր մահմետական իշխանութեան ներքեւ էր, Շնորհաւարին ըսել կու տար՝ թէ «ինքնաշարժ Խոսիւք և բռնակալաց աշխարհի հրամանօք՝ զանձինս իւրեանց յայս աստիճան հոգեւոր բարձրութեան ձգեն, և ոչ ընտրութեամբ Աստուծոյ և աստուածայնոց արանց (եպսոք և քննիչք) համօրէն ազգիս, որպէս օրէնն պահանջէ՝»: Նոյնը կը վկայէր 1342ին Սոյո ժողովն ալ Աղթամարայ և Աղուա նից կաթողիկոսաց համար, թէ բռնակալ-

1. Նամակ. 138:

ներէ զընդունին զհաստատութիւն ժամա- նակաւոր իշխանութեան և ոչ զհոգեւորին, զի դանին չէ ինչ փոյթ զհոգեւորաց քրիս- տոնէիցն»։ Կաթողիկոսութեան մէկ ճիւղին ընթացքն էր այս։ Գալով բնին, Լուսաւորչի աթոռոյն, անոր ժառանգներն ալ կը վարակուին նոյն «ախտիւր», և յա- ճախ հեթանոս իշխանդներէ կ'ընտրուին, և անձամբ կ'ընտրեն իրենց յաջորդներն ալ, առանց առնելու ազգին հաւանութիւնը։ 1409ին Յակոբ Գ. Կիլիկիոյ ամիրային հը- րամանաւ կը ստանայ աթոռին տիրութիւնը, և յետոյ իրեն որսալով Կիլիկիոյ եպիս- կոպոսներէն զմմանս, որ պարզ ձեւակեր- պութեան համար էր, կ'աթողիկոս կը նստի»։

Բայց մայր աթոռիդ ուրիշ վախճան մը պահուած էր։ 1441ին՝ մինչ տակաւին կը գտնուէր Սաֆ մէջ, արեւելեայք խորհե- ցան փոխադրել զայն յէջմիածին՝ ուր եղած էր ժամանակաւ Պատմառնեքը՝ զորս կը թուէ անոնց պարագլուխը թովմա մեծփեցին, զանազան են և մէկ մասը կեղակարծ։ Հոգ զմեզ հետաքրքրողն է այդ որոշումը տուող ու զկիրակոս վիրա- պեցին ընտրող ժողովը, որ հինիքէն տար- բեր ու նոր ծնւ մունէր, կազմուելով բազմաթիւ եպիսկոպոսներէ, վարդապետ- ներէ, քահանաներէ, վանականներէ, և անոնց հետ նաեւ «ազատը և որդիք ա- զատաց, ձեռնաւորք և տաճարտէրք, և ան- րիս և անհամար քաղմութիւն ժողովրդեան արտեց և կանանց», որոնք այս առաջին անգամ կը մասնակցէին ընտրական ժո- ղովի մը, որ միանգամայն նպատակ ու- նէր՝ աթոռոյն փոխադրութիւնը, Հոս ու- րեմն և այս նշանաւոր թուականէս կը սկսի հայ ժողովուրդը՝ — և պիտի շարու- նակէ երբ իրեն թոյլ տրուի՝ — խառնել իւր ձայնը հայրապետական ընտրութեանց մէջ։ Իսկ այդ գումարման համար էջմի- ածնի մէջ՝ կանխաւ խնդրեցին Երեւանի Աղուպ բեկ բռնակալէն, և հերաման եղեւ ի բռնաւորէն օրհնել կաթողիկոս՝ առանց

հակառակութեան»։ Այլազգիդ կ'երեւի թէ նոր ընտրութեան չի խառնուիր, այլ միայն կը թոյլատրէ ժողովն իւր իշխա- նութեան մէջ, և բարեկարգութիւն կը պահանջէ ընտրողներէն։

Անոնք շուտով ձանձրացան Կիրակոսէ, և քառասուն եպիսկոպոսք ու քահանայք միարանած՝ աթոռընկէց ըրին զայն, որոյ մասին պիտի խօսինք յետոյ, Էւ յիշեալ բեկէն խնդրեցին, և նա անոր տեղ հերա- ման տայ ձեռնադրել զեպիսկոպոս շլոյն թագէտի»։ Գրիգոր մակուացին, և «ժո- ղովն անխաւ մտեալ ի սուրբ էջմիածին», և սկսան պատարագել զԳրիստոս, և ու- ռախութեամբ և ոտնահարութեամբ ձայ- նեցին Հայոց տեառն Գրիգորի», կը գրէ նոյն Մեծփեցին»։

Մակուացիդ և իւր աթոռակալն Արիս- տակէս կը կուտին իրարու հետ։ Էջմիածնի վարդապետներէն Սարգիս կ'օգտուի առ- թէն, 1461ին Լուսաւորչի աջը կը գող- նայ և կ'երթայ Զահանշահ ամիրայէն խնդրելու կաթողիկոսութիւնը։ Փան զինքն արթուն կը փութի Աղթամարայ կաթողի- կոսը Զաքարիա, կը կանխէ քան զմըր- ցակիցը և հարուստ պարգեւներով զը հարկ բռնաւորին սիրտը, որ կը հրամայէ՝ որ նախ Զաքարիա նստի էջմիածնի աթոռը, և ապա անոր յաջորդէ Սարգիս, ինչպէս եղաւ իսկ»։

Ստեփանոս Ե տաղտկացած այլազգեաց բռնութիւններէն, 1547ին իւր տեղ կա- թողիկոս կը ձեռնադրէ զՄիքայէլ, և ինք կը սկսի թափառել ի Պոլիս, Հոսմ և այլուր։ Ի դարձին կ'ընդունուի տեղապա- հէն պատուով՝ իրբեւ նախագահ կաթողի- կոս, և վախճանելով՝ աթոռը կը փնայ Միքայիլի՝ թագէտս Բ մեռնելէն յառաջ իւր տեղ 1575ին կաթողիկոս կը դնէ իւր փոխանորդն Առաքել։ Սա եւս չկարենա- լով հանդուրժել արտաքին բռնութեանց, 1579ին իւր տեղ կը ձեռնադրէ Գրիգորի Ե, և ինք կ'առանձնանայ ու կը վախ-

1. Mansi, XXV, 1258. — 2. Զմբ. Գ. 456. — 3. Արք. Զ. Աւեր. 215-16. — 4. Գրբ. Բ. 489, 1539

ևս. Ս. Ղըր. — 5. Զմբ. Գ. 508-4, 506. Առ. Դաւ- րեթեցի, Վշրշատ. 1884, 337. — 6. Զմբ. Գ. 518-19.

ճանի մենաստանի մը մէջ¹, Եւ այդ բոլոր ընտրութեանց մէջ որ և է բաժնի շունի հայ ազգը:

Դոյն Դաւիթ 1598ին «ձեռնադրեաց ինքն միւս եւս կաթողիկոս» զՄելքիսէթ, ըստ ոմանց իբր օգնական, ըստ այլոց՝ բռնադատուած այլազգի իշխանն՝ զոր կաշառեր էր Մելքիսէթ: Երկուքն ալ յետոյ ճնշուած անօրինաց հարկապահանքովեան ներքեւ, կը հրաւիրեն Տիգրանակերտի եպիսկոպոսը Սրապիոն՝ զալու հատուցանելու աթոռին պարտքերը, խոտանալով անոր թողուլ հայապետութիւնը: Սրապիոն կ'երթայ. բայց վէճ ու շրջփոթութիւն կը ծագի իւրեց մէջ: Երկու կաթողիկոսունք խոյս կու տան Տաթևու վանքը. և ջուղայեցիք և արեւելեայք «ժողովեալ զամենայն ժողովուրդ երկրին զեկեղեցականս և զաշխարհականս, և եղեալ սինհոդոս մեծ, և այնպիսի մեծախումբ հանդիսի ձեռնադրեցին զվարդապետն Սրապիոն կաթողիկոս ամենայն Հայոց» 1603ին, անունը Գրիգոր դնելով: Սա յետոյ միւս կաթողիկոսաց թելադրութեամբ՝ Շահաբասի ազահ սուրհանդակներէն խեղդուած ու տանջուած, ձգեց փախաւ իւր նախկին աթոռը, ուր և վախճանեցաւ յաջորդ տարին²:

Դաւիթ վերջապէս հրաժարեցաւ իշխանութենէն³. և Մելքիսէթ միայն մնացած, 1624ին բարեկամաց խորհրդով իւր Սահակ եղբորդին կաթողիկոս օրհնեց, և կոնդակով ծանոյց ազգին՝ թէ ձերութեան պատճառաւ կը հրաժարի աթոռէն ու Սահակայ կը թողու. և թղթով խնդրեց ջահէն՝ «զի սմա շնորհնցեա զկաթողիկոսութիւնն»: Այդ թղթով ու պարգեններով Սահակ զնաց շահին գուռը՝ «առ ի սեպհակապետութիւնն», ինչպէս որ եղաւ ալ: Մելքիսէթ յետոյ փախուստ տուաւ յիւով, ուր և վախճանեցաւ⁴, իսկ ջուղայեցիք

շուգեցին ճանաչել զՍահակ, որ ապա զադտնապէս Օսմանցոց սահմաններն ապաւինեցաւ⁵. Եւ Հայք խնդրեցին Պարսից Շահնէֆի թագաւորէն «հրաման կաթողիկոսութեան» Մովսէս վարդապետին համար, «և ջահն ետ հրաման և զթուղթ կաթողիկոսութեան... Ապա ամենայն ազգն Հայոց որք յարեւելս և յարեւմուտս կային, միաբանեցան թղթով և բանիւ, և արարին զՄովսէս վարդապետն կաթողիկոս»՝ 1629ին. այսինքն ընդունեցան շահին ընտրածը:

Անոր վախճանելու պահուն «ժողովեցան առ նա եպիսկոպոսը և վարդապետը և երեւելի արք. ու խնդրեցին՝ որ ինքն իսկ նշանակէ իւր զիւրորդ. որուն նախ ընդդիմացաւ, և ապա զԻջանելով՝ ցոյց տուաւ զՓիլիպպոս, որուն Հայք հաւանեցան առանց ժողովի, այլ «յիւրաքանչիւր տեղեաց առաքեցին զթողթս վկայականս»⁶. և 1633ին ձեռնադրեցին զայն⁷, իսկ 1655ին «ժողովեալ վարդապետներ և եպիսկոպոսունք»՝ որ Փիլիպպոսի մահուան առթիւ հաւաքուած էին, մնացին Էջմիածնի մէջ մինչեւ մօտաւոր ծաղկազարդին օրը, և «ի նմին տունին օրհնեցին զՅովսէփ (Գ) վարդապետն կաթողիկոս»⁸:

Ադոր օրով ու դէմ Եղիազար վրդ. անթապի խորհեցաւ հիմնել օսմանցի հպատակ Հայոց զատ կաթողիկոսութիւն մը: Համաձայնեցաւ Սոյ խաչատուր կաթողիկոսին հետ, առաւ պարգեւաց փոխաբէն եպարքոսէն ստացաւ առանձին կաթողիկոսութեան հրովարտակ մը. և հակառակ խորհրդոց ազգին երեւելեաց, որ չէին ուզեր աթոռոյ նոր բաժանում մը, խաչատուրն ձեռնադրուեցաւ չորրորդ կաթողիկոս ու զնաց նստաւ Երուսաղեմի մէջ: Իսկ յետ Յակոբայ մահուան՝ 1682ին անցաւ զրաւեց անոր աթոռը, հրաւիրուելով Էջմիածնի միաբանութենէն⁹:

Այսպէս ուրեմն մեր այս պատմական

1. ԶԺ. Գ, 533. — 2. Դաւիթ. 2-8, 4, 7, 19-20, — 3. Դոյն. 165. — 4. Դոյն. 172-73, 175-76. — 5. Դոյն. 174. — 6. Դոյն. 176-77, 180. — 7. Դոյն.

182. — 8. Դոյն. 242. — 9. Դոյն. 266. — 10. ԶԺ. Գ, 677-700, 719-20.

վերջին շրջանին հայրապետական ընտրու-
թիւնը խաղալիկ մ'էր դարձած քմահա-
նոյց։ Չայն կատարողները յամախ օտար
քոնաւորներ են. մերթ կաթողիկոսունք
«խնքնաշարժ արտուր» կ'ընտրեն իրենք
գիրենք և իրենց յաշորդները, կամ նոր
աթոռներ կը հիմնեն. ու կաշառքը մեծ
դեր կը խաղայ, իսկ ազգը քիչ անգամ
կարող է ի գործ դնել իւր պատմական
իրաւունքը՝ ժողովրդեան ձեռքով, որ հոս
իրեն առաջին անգամ կը սկսի ներկայա-
ցուցիչ հանդիսանալ, և ժողովման զը-
ժուարութեան ժամանակ ժողովման թղթերով
կը յայտնէ իւր հաճութիւնն ընտրելոյն։

Ժ. Արտաբեկեցոյքին։ — Լուսաւորչի
աթոռին վրայ բազմողները թէպէտև սահ-
մանուած միալու հոն ցմահ, սակայն կը
հարկադրուէին երբեմն պէսպէս պատճառ-
ներով նաեւ իշնել անտի ակամայ կամ
կամաւ, և ուրիշի թողուլ զայն։ Այս հրա-
ժեշտն ալ ունէր իւր օրինական ձեւակեր-
պութիւնքը, իւր յատուկ և ողբերգական
ու մերթ պրտաշարժ կամ խորշելի տեսա-
րանները, զորս կ'անցնէին նկատել՝ ի
լրուամ մեր ներկայ ուսումնասիրութեան։

1. Մեծն Ներսէս գծտելով Արշակայ
հետ, երեսը պահեց անորմէ, առանց այլ
եւս տեսնուելու ուստանին և արքունեաց
մէջ։ Թագաւորն առաւ պարզապէս կա-
թողիկոս դրաւ «փոխանակ Ներսիս ըզ-
Չունակ», և այդ գործով իսկ Ներսէս
հրաժարեցուցուած համարուեցաւ։ Սահակ
երբ չհաւանեցաւ Արտաշիսի գահընկեցու-
թեան, վճար հրամայեց «զտունն կաթու-
ղիկոսական ի սրբոյն Սահակայ յարքու-
նիս ունել»։ Յետոյ նախարարը գղջացած՝
խնդրեցին որ վերստին զառնայ աթոռը.
բայց նա մերժեց՝ էթէ կարելի է հաւա-
տալ խորհնացւոյն, Պարսից արքայն սըր-
բոյն յաշորդին Շմուելի կը յանձնէ աշ-
խարհական գործեր, և Սահակայ կարուած
կը թողու գիւղեր, որպէս զի հոն բնակի,
«միայն իշխանութիւն ունելով վարդապե-

տութեան սովորական կրօնիցն, և ձեռ-
նադրութեան զայնոցիկ՝ զորոց և Շմուէլն
յանձն առնուցու»։ Տեսանք նաեւ Գիւտի
հրաժարեցումը Պերոզէ՝ ուրացութիւնը մեր-
ժելուն պատճառաւ։ Այս երեք օրինակաց
մէջ հրաժարեցուցը թագաւորներ են ինքն-
իշխան կամօք։

Սահակայ առաջին յաշորդին Սուրմա-
կայ «ընդդիմացեալ ոմանց ի զօրավար
իշխանացն Հայոց, մերժեալ ընկեցին զնա
յիշխանութենէ կաթողիկոսութեան»։ Անոր
յաշորդը Բրքիշոյ ասորին և իւր ազգակից
պաշտօնեայք եկած էին ու կ'ապրէին «տան-
տիկնօք»՝ ըստ իրենց աշխարհի սովորու-
թեան. որուն չհանդուրժելով մերոնք,
նոյնպէս «խոտեալ» մերժեցին զԲրքիշոյն
ի քահանայապետութենէն Հայոց», իմա-
ցընելով նաեւ Վառամայ, որոյ կողմանէ
ղրկուած էր¹, Հոս գործողը իշխաններն են։

Քրիստոսապետը Բ «դիպաւ այր հպարտ և
ամբարտաւան, որոյ լեզու իւր էր իբրեւ
զսուր սուսեր», այնպէս որ խռովութեանց
պատճառ եղաւ ժողովը որ կազմուեցաւ
զինք զատեւուլ², լսեց «ի նորին ընտա-
նեաց» երկու հոգւոյ ամբաստանութիւնը։
Յետոյ քանի մ'ապիսկոպոսներ գնացին
անոր տունը, և «առին ի նմանէ զփա-
կեղն (որ է քոյ) պատուոյ քահանայապե-
տութեան, և ընկեցին զնա ի կարգէն և
հալածեցին զնա անարգանօք»։ Եպիսկո-
պոսներ են՝ որ ժամանակի մեր բարուց
յատուկ այդ բիրտ եղանակն ի գործ կը
դնեն հայրապետին վրայ։

2. Հրաժարեցումը միշտ յաշորդութեամբ
չէր պսակուեր, և զրկելոյն կամքի ուժէն
կախուած էր։ Յիշեցինք Վահանկան ա-
թոռընկեցութիւնը³, որուն սակայն չհա-
մակերպեցաւ նա. «և յերկոցունց կող-
մանց նդովիւր լցին զաշխարհս Հայոց»։
Ստեփանոս վրդ. երկու ընկերներով Վաս-
պուրական գնաց՝ «ի յանդիմանութիւն Վա-
հանայ և Ապուսահլի» թագաւորին՝ անոր
պաշտպանին, և բանտ դրուեցաւ։ Ու խը-

1. Փաւս. 123. — 2. Աստ՝ 86. — 3. Փարպ. 75-78.
— 4. Խորեն. Գ. 4բ. — 5. Աստ՝ 87. — 6. Փարպ.

72-73. — 7. Աստ՝ 84. — 8. Սեբեոս՝ 153. — 9.
Աստ՝ 106.

սովորելներ տեւեց երկու կաթողիկոսաց մէջ, մինչև որ երկուքն ալ մեռան մի և նոյն տարին¹։

Նոսազ վրդովիչ չեղաւ նաեւ Պետրոս Գետապարձի ղեպըը։ Յովհաննէս արքայ և ազատանին անկանոն կեանք մը կը վարէին, ականջին իցած հայրապետին խրատուց ղէմ, որ տաղտկացած՝ փախաւ առանձնացաւ չորս տարի վասպուրականի Զորոյ վանքը։ Անոնք ի վերջոյ համոզեցին ու դարձուցին զայն, որ հազիւ յԱնի մտաւ, բռնեցին բանտեցին, և անոր տեղ Սանահնի հայրը Դէոսկորոս «նստուցին կաթողիկոս»։ Պետրոսի աթոռընկեցու թեան պարզագոյն ձեւն էր այս։ Հայ եպիսկոպոսունք դառնացած ալդ խայտառակութեան ղէմ, ոչ միայն ձեռնպահ մը նացին Սանահնեցւոյն ընտրութենէն, այլ և «նզովիւք փակեցին զԹագաւորն և զաւանայն նախարարն», որոնք սարսափած՝ միջնորդենք զրին համոզելու Գետապարձը՝ դառնալ իւր աթոռը։ Գումարուեցաւ Անույ մեծ ժողովը, որոնք «սուգ մեծ հասուցանէին Դէոսկորոսի, և յոյժ պարտաւորեցին զնա, և մերժեցին ի պատուոյ և ընկեցին յաթոռոյ հայրապետութեանն²»։ Ուրիշ կերպով մ'ալ կը պատմուի անկումդ։ Անույ ռամիկ բազմութիւնն երբ տեսաւ ըզ-Պետրոս հանուած բանտէն, «ընթացեալ յանդգնութեամբ ի վերայ Դիոսկորոսի, պատառեցին զքոզ երեսաց նորա յաւուր յայտնութեան տեառն, մինչդեռ օրհնէին զլուրն. . . և հանին զնա անարգանօք ի քաղաքէն, և կացուցին զՊետրոս յաթոռ իւր»։ Իսկ Սանահնեցին զնաց տրտում իւր մենաստանն³։

Գր. Վկայասէր իւր տեղապահ Գէորգը մերժելու համար⁴, մարդիկ յղեց և «ընկէց զտէր Գէորգ յաթոռոյ հայրապետութեանն, և առեալ զքոզն ի զխոյ նորա. և Գէորգ զնաց վիրաւորեալ ի Տարսոն քաղաք և մեռաւ» սրտին ցաւէն։ Նոյնպէս Բարսեղ Ա մեծարուած Պարսից սուլտանէն, և «արք փառաւորք ի սուլտանէն զհետ իւր», զնաց ի ջահան, «յարեաւ ի վերայ տեառն թէոդորոսի» որ հակառակաթոռ մ'էր՝

յաջորդած Սարգսի⁵. և «ընկնոյր յաթոռոյն զտէր Թէոդորոս, և առեալ ի նմանէ քքոզն և զդաւազանն և զսուրբ նշանն տեառն Պետրոսի, և արար միահեծան զհայրապետութիւնն իւր»⁶։

3. Աթոռընկեցութեան պահուն արեւելեան կողմի Հայոց ցոյց տուած սգեղ բարբերը կը մարքուին կիլիկիոյ մէջ, ուր նոյն գործը կը կատարուի հաւաքական քննութեամբ ու վայելուչ կերպերով։ Շնորհիւ նորոգութեանդ՝ սրտատուչ երեւութիւ մը կը ներկայանայ Բ Կոստանդնի հրաժարեցումը։ Հեթում Բ «նախանձ հակառակութեան բերեալ ի սրտին» անոր ղէմ, եպիսկոպոսաց և իշխանաց ժողով մը կը կազմէ Սոյ մէջ, ուր կու գան ամբաստանիչներ «և զնոն բարուրս բաւ զումս զբազատ բանից ի վերայ հայրապետին՝ անարժան և անպատշաճ լսողաց»։ Որպէս թէ պատարագէն յառաջ շարքաթ կը խմէր, Հոռովկայի Լկտանոցներէն հարկ կ'առնուր և այլն. «և այսպէս զրպարտեալ զկաթողիկոսն, զորոյ գիտնն և զճմաւրիտն Աստուած միայն գիտէ»։ Կոստանդին խոնարհական հեղութեամբ կը պատասխանէր՝ թէ ստոյգ էին ըսուածները, և թէ անոնց գիտցածէն աւելի յանցանքներ ալ ունէր ի ծածուկ, որով անարժան կը խոստովանէր զինքն ունեցած աստիճանին, Թագաւորն ու ժողովն ըսին. «Ի բաց հան ի քէն զկաթողիկոսութիւնդ և տուր ցմեզ»։ Եւ նա հոն անոնց ներկայութեան զգեցաւ հայրապետական հանդերձը, որ էին բազմախաչ նափորտը, հինգերկն հմիփորոնը, պատուական թաւքը, և զրաւ մեծագին մատանին. ձեռքն առաւ Լուսաւորչի աջը և օրհնեց Հայոց Թագաւորութիւնն ու բոլոր աշխարհը. զհուսթիւն մատոյց Աստուծոյ, ինդրելով որ ազգին տայ բարի և ընտիր առաջնորդ մը, և զինք դատադաց դատաստանն Աստուծոյ թողլով։ Յետոյ վերստին հանեց զգետնը,

1. Ասողիկ՝ 168-69. — 2. Ուս.՝ 87-90. — 3. Կիւրակ.՝ 51. — 4. Աս.՝ 107. — 5. Ուս.՝ 247. — 6. Աս.՝ 107. Ուս.՝ 259. — 7. Նոյն՝ 290-91.

ծալեց դրաւ արծաթեայ սեղանին վրայ, և յանձնեց՝ ըսելով. «Ահա զոր խնդրէքդ»։ Անցաւ գնաց հայրապետանոցը. մազեղէն հանդուգ մ'ու կնկուղ մ'առաւ վրան, ողջունեց զամէնքը, և դուրս ելաւ «միայն և լուիկ»։ Հակառակորդները խորհելով՝ որ կրնար Հայաստան երթալ և իբր կաթողիկոս ընդունուիլ, բռնեցին ու փակեցին զինքը Լամբրոն բերդին մէջ, ուր մնաց չորս տարի՝, և ուսկից յետոյ Կեսարիոյ արքեպիսկոպոս ընտրուեցաւ. իսկ 1307ի ժողովը զայն կրկին դարձուց հայրապետական աթոռին վրայ։

Հրաժարեցման առթիւ արբազան զգեստին զգեցումն ու մերկացումը Յունաց քով ալ կար. այսպէս ընել տուին փոտեանքս. իգնատոսիս՝ զոր ձգեցին Պոլսոյ աթոռէն՝, Կիլիկեցիք անշուշտ անոցմէ ուսան. զի մերոնք ի սկզբան կը մերժէին անարգաբար, և յետոյ սկսան հայրապետական քօղն աճուլ անկելոյն զլիւն կամ ձեռքէն, ինչպէս տեսանք վերեւ։

Լեւոն Դ «ընկէց» զՅակոբ Բ, որովհետեւ յանդիմանուած էր անկից՝, Պէտք է հասկանալ միշտ ժողովով՝ ըստ Կիլիկեան սովորութեան, զոր նախայիշեալ օրինակէդ զատ՝ նկարագրուած կը գրտնեց նաեւ Սոյ 1342ի ժողովէն՝ այսպէս. «Զկարէ թագաւորն հրաժարեցուցանել կամ պատժել իրաւամբք զկաթողիկոսն. այլ եթէ չար ինչ գործեսցէ հակառակ կանոնաց, վասն այնր դատաստանաւ ընկնուն զնա կանոնք և պատժեն։ Եթան՝ արքայ ժողովէ զեպիսկոպոսուն սըն որ ընտրեցին զայն կաթողիկոս, և ընկնուն զնա և պատժէ»։

Ա. Ռուբրիկեանց գաճուս անկումէն վերջ ուրիշ հանգամանաց ներքեւ կը ներկայանայ հրաժարեցումը Յայտուն դէմք մ'էր այդ շրջանին Գրիգոր տաթեւացին, եռանդնոտ, բուռն ու տարօրինակ մտայնութեան տէր մարդ մը, որ օգտուելով հայրապետական աթոռին հեռաւորութենէն, Հայաստանի մէջ տեսակ մը կաթողիկոսական դիրք և իշխանութիւն տուած էր ինքն իրեն։ Նամակ մ'ուսէ՛ թէ անոնց պաշտօն մ'ունէն հայրապետէն, այլ ինչպէս ինք կը կարծէր՝ «ի յազմանէ Հոգւոյն եկաք ի կողմանս Վասպուրական ծովուն», տապալելու համար Աղթամարայ աթոռը. «և ամենայն կարգաւորք և աշխարհականք կամակից եղին անկման կաթողիկոսի, և նոցին կամօքն ընկեցաք և լուծաք զնա ի կարգէն և յաթոռոյն (ինչպէս գրողդ կը կարծէր)։ Եւ գրեցաք յերկուս թուղթս՝ առաջին և երկրորդ՝ յամենայն քաղաքս նոցա և ի գեղս. այլ և յամենայն աշխարհի չորս կողմունս. ի յարեւելք՝ ի յաթոռն Գրիգորիսի. ի հարաւ՝ մինչ ի Պարսկաստան, ի հիւսիս՝ մինչ ի Վրաց տուն. ի յարեւմուտք՝ մինչ ի յաթոռդ սուրբ. և զթղթերդ առ ձեզ առաքեցաք»։ Միանգամայն խորհուրդ կու տայ հայրապետին՝ անոնց եպիսկոպոս մը ձեռնադրել, մեռուն և օրհնութեան թուղթ յղել։ Չուր ջանքեր էին, և ապա տամբ աթոռը մնաց միշտ։

Կիրակոս վերապեցին իւր հակառակորդներն ունէր, որոնք կրկնակի կ'ամբաստանէին զինքը. «մին՝ զի ի կողմանէ Աղթամարայ է, (լինելով Գաղթաբունեաց գաւառէն), որ ի բազում ժամանակաց հետէ բանադրեալք են, (և զորս արձակեց նոյն կաթողիկոսը), և միւս եւս՝ զի պարտ է ի կաթողիկոսաց եպիսկոպոս լինել, և ապա յեպիսկոպոսաց կաթողիկոս ձեռնադրել»։ Ուր Կիրակոս զինք կաթողիկոս ձեռնադրողներէն ստացած էր եպիսկոպոսական կարգն ալ, և ոչ Հայոց հայրապետէն՝ ըստ սովորութեան։ Գիտածին յանցանքներ երկուքն ալ, Եւ քառասուն չափ եպիսկոպոսներ ու քահանայք միասին հաւաքուած, որոց զլուսն էր Յովհաննէս Էօս

1. Ստ. Սիւն. 320-22. — 2. Յովնանեան, Պատմ. տիկե. Ժող. Վիճենա, 1848, 598. — 3. Ստմ 109. — 4. Manzi, XXV, 1258. — 5. Ոսկեփորիկ, Բ.

1091 Ս. Ղար. — 6. Գրչ. Բ. 1494 Ս. Ղար. ունի անոր արձակման թուղթը. տես և Զատ. Գ. 438.

լօտիկ վարդապետ, որ անոր ընտրութեան զխաւորներէն եղած էր երկու տարի յառաջ, «եկեալ մտին ի սուրբ տաճարն Միածնին՝ բարկութեամբ և սրտմտութեամբ լցեալ»։ Երոց աղմկէն կիրակոս փութաց փախչիլ ճրիստոնէի մը տունը, «և դողալը յահէ՛» յարձակողաց։ Անոնք զսան զինքը, բռնեցին ու տարին Աղուպ բեկ բռնաւորին առջև, ամբաստանելով՝ թէ մկրտուած ու ճրիստոնեայ չէ, և հերձուածող է, զի հիւանդաց օծման կարգը բերել տուած էր կոստանդնուպոլսէն։ Այլազգին անոնց ամբաստանութիւններէն աւելի ընդունած կաշառքէն համոզուած կաթողիկոսին յանցաւորութեան, հրաման տուաւ և անոնք վտարեցին զայն արժողէն։

Մեծփեցին՝ որ կը պատմէ զայս, մեղադրանօք կ'ըսէ կօլօտիկին՝ թէ «զգաւազանն ի ձեռաց նորա յափշտակեցեր և զմատանին ի մատանցն առեր, իբր զգատապարտեալ ծառայ առաջի անօրինաց անարգեցեր»։ Քաղաքակիրթ արեւմտեցէն անշատուած մեր արեւելեաց բարքերն են՝ որ կ'իշխեն դեռ հոգւոյ Հեթանոս վրա՞ն ու Պերոզ աւելի փափկութիւն ցոյց տուն ու Սահակայ և Գիւտի, երբ հրաժարեցոյցին զանոնք։

Ձէ յիշուած՝ թէ ինչ կերպով կը վարուէին մեր այն կաթողիկոսունք, որ կամովին կը հրաժարէին, և կ'ընտրէին ու կը ձեռնադրէին իրենց յաջորդները հաւանութեամբ հասարակաց։ Բայց մեք բաւական համարինք՝ ինչ որ տեսանք հոս արթունկեցութեան մասին, և կնքենք մեր ճննութիւնը պատմութեան սահմանաց մէջ, յորս նպատակ դրինք թափառիլ։

*
* *

Աշխատութիւնս յետ գրութեան մը կը պահանջէ։ Բանիմաց ընթերցողներս տեսան՝ որ ուսումնասիրութեանս մէջ խղճի մտօք հետեւեցայ եւրոպական բանասիրու-

թեան, ճշմարիտ բանասիրութեան արուեստին կանոնաց, և ջանացի մանրակրկիտ ճննութեամբ նկարել ամբողջական պատկերը մեր եկեղեցապատմական յոյժ կարեւոր խնդրոյ մը, ինչպէս է հայրապետական ընտրութիւնն ու ձեռնադրութիւնը, որ դեռ չունէր իւր կատարեալ նկարագիրը։ Տեսանք՝ որ այն շրջանին, երբ բոլոր միւս եկեղեցիք, սկսեալ Հռոմէականէն, ընտրութիւնը կը կատարէին զործակցութեամբ կղերին ու ժողովրդեան, մեր ազգը կը հեռանայ հասարակաց սովորութիւնէն, և նախ իբր երեք դար ընտրութիւնը կը վերապահէ ազնուականութեան, ինչ որ յոյժ եզակիս ու հետաքրքրական երեւոյթ մը կը մնայ ընտրութեանց պատմութեան մէջ։ Կայկապոս զորդը կը կազմէ։ Ասոր կը յաջորդէ Էդուարդէն աւագանւոյն ու եպիսկոպոսաց խառն ընտրութիւնը, որ հետզհետէ եպիսկոպոսաց վրայ կը կեդրոնանայ՝ թագաւորին հետ միասին։ Եւ հուսկ 1441էն ի վեր, թագաւորութեան և ազնուականութեան սպառնելով, անոնց տեղը կը սկսի բռնել ժողովուրդը կղերին քով։ Հաւատեցինք նոյնպէս՝ թէ հայրապետական ձեռնադրութիւնը սկսեւ է թէ դարէն, և օծումն ժիւն միայն, մաքրելով և ուղղելով բոլոր սխալ տեսութիւնները՝ որ կային այս հարցերու շուրջ։ Աշխատութիւնս առանձին հատորով եւս լոյս կը տեսնէ, բովանդակութեամբ ճիշդագոյն, և ունենալով ձեռնադրութեան ամբողջական հին կանոնն ալ։

Այսպիսի ծիառապատմական երկեր հաճոյքով կը դիտուին եւրոպական ճաշակակիր թէ հասարակութեանց մէջ։ Գնահատողներ ունեցայ եւս ալ ազգայնօրէն մէջ, որոց մին զրեց ինձ հետեւեալը. «Ո՛րքան հմուտ, շահեկան և հմայիչ գրութիւննիդ, վարպետի գործ արդարեւ»։ Գովեստից սպասող և զանոնք հրապարակագործ ընող մարդը չեմ Յիշեցի զայս, քովը գետեղելու համար հակոտնեայ տեսութիւնն ուրիշ տարօրինակ մտքի մը, որ Պուլսէն կը խօսի, և ժամանակէ մ'ի վեր ժամանակի մէջ կը զրէ խմբագրականներ այնքան ապաժամ,

որ կը ստիպուի ստորագրել «Պ.» ծածկա-
նուամբ, զգուշանալով ինքն իսկ ստանձնել
անոնց պատասխանատուութիւնը քաղա-
քակիրթ ընկերութեան առջեւ:

Այդ Պ. ինչ կ'ուզէ որ ըսէ: «Հ. Հա-
ցունին, կը գրէ, կը հզօն փաստել՝ թէ
հայ Հայրապետներու ընտրութիւնը բնաւ
ժողովրդական եղած չէ. թէ ժողովուրդը
բնաւ ձայն չէ ունեցած կաթողիկոսներու
ընտրութեան աստե՛ն. մէկ խօսքով՝ այս
շնորհալի Միտիթարեանը մեր երեսին կը
պոռայ՝ թէ հայ եկեղեցին ժողովրդապե-
տական չէ եղած» (23 ապրիլի), Հիտա-
ղեքուեցայ և հարցուցի՝ թէ ո՞վ է ար-
դեօք «շնորհալի Միտիթարեանին» դէմ այդ
շնորհագուրկ գրիչը շարժողը: Ըսին ինձ.
Պարոյր Քէչեան կը կոչուի: Զուգեցի հա-
ւատալ: Այդպիսի անձուկ մտայնու-
թիւն որդւոյն մէջ այն մտահարուստ Բիւ-
զանդ Քէչեանի, որ գիտէր այնչափ գնա-
հատել իմ պատմաքննական խուզարկու-
թիւնը, և այն բռնութեան շրջանին կը
շանար ամէն գնով հրատարակել զանոնք
իւր թերթին մէջ: Իսկ իւր անուան ժա-
ռանգը՝ նախ բնաւ չի ճանաչեր պատ-
մութիւնը, և քիչ՝ հայ եկեղեցին, որով ա-
ռաջինը թշնամի մը կը համարի միւսին:
Երկրորդ՝ անտեղեակ բանասիրական ար-
ուեստին, ձիգ մը կը նկատէ աշխատու-
թեանս մէջ՝ ուր կը տիրեն բացարձակ
հանդարտութիւն, առատութիւն փաստե-
րու, և անխուսափելի հետեւութիւնը, և
որոց դէմ ինք ողբերգու աղաղակներ միայն
ունի: Երրորդ՝ երկիւղէն որ ի տես ըրն-
նութեանս հայ եկեղեցւոյ «ժողովրդապե-
տականութեան» հիմերն իսկոյն պիտի սա-
սանին ու քանդուին, նախ քան ցուցնելս՝
թէ հայ ժողովուրդը 1441էն սկսած մաս-
նակցիլ ընտրութեանց, փութաց բողոքել
իմ չունեցած համոզմանս դէմ՝ թէ մեր
Հայրապետական ընտրութիւնը «բնաւ ժո-
ղովրդական չէ եղած»: Թէպէտեւ պատմու-
թիւնն եթէ այդպէս ցուցնէր, ես ալ պիտի
ստիպուէի նոյնը կրկնել, և յանգատողը
պիտի լինէր պատմութիւնը, որ Պ. ի ասորը-
ժածին պէս չէր վկայեր, և պէտք էր պատ-

ժել զայն: Տարբեր բան մը չէր սպասուեր
այդպիսի խմբագրականներէ:

Ինչո՞ւ այդքան տագնապ այդ մարդուն
մէջ: Որովհետեւ իւր բորբոքած երեսակա-
յութիւնն իմ աշխատութեան մէջ կը նշը-
մարէ «Հոսմի Աթոռին շնորհներուն ար-
ժանանալու ճիգ մը»։ շնորհներ՝ զոր այդ
Աթոռը բնականապէս պարտական է տա-
լու ինձ՝ հայ ընտանապէս պարտական է տա-
հին հռովմէականին ճիշդ հակառակը ցու-
ցնելուս համար: Յայտնի է՝ որ նախա-
պաշարման մտայլին մէջ խաբխափող ա-
րեւելեան մտեքրու համար ինչ որ անծա-
նօթ է՝ հռովմէական է և հակառակ իրենց
եկեղեցւոյն, իւր գրութեանցս մէջ ուրիշ
բան չեն կարող նշմարել՝ եթէ ոչ «պատ-
մական գիտական փաստերով հայ եկեղե-
ցին վարկաբեկելու յարատեւ ճիգ» մը:
Բայց պէտք է ներուի ինձ հարցնել. ի՞նչ
տեսակ եկեղեցի է այն՝ — Պ. ի երեսակա-
յածը կ'ուզեմ ըսել՝ — որ կը վարկա-
բեկուի պատմագիտական փաստերով. կամ
ինչ բանի վրայ հիմնուած է, երբ կը վախէ
պատմութիւնէն, իջնէ պատմական եկեղեցի
մէ՛, պէտք չէ խորշի պատմութիւնէն, այլ
փարի անոր. իսկ եթէ նոր եկեղեցի մ'է,
պէտք չէ կարեւորութիւն տալ պատմու-
թեան, ինչպէս չեն տար բողոքական եկե-
ղեցիք: Միծմարել հինը և խուսափիլ անոր
տեսութիւնէն, հակասութիւն մ'է՛ որ շատ
մը կ'սակածներու դուռ կը բանայ: Իւ պար-
զապէս ցաւալի է այդ անվստահութիւնը,
զոր Պ. երու անգիտակից նախանձայուզու-
թիւնը ցոյց կու տայ այդ դժբախտ եկե-
ղեցւոյն հանդէպ:

Թող ներկայացնեն զայն՝ ինչ երկդիմի
պայմաններու ներքեւ որ կ'ուզեն. ես չեմ
կարող արգելուլ զիրենց: Բայց չեմ նե-
րե՛ր՝ որ ինձ վերագրեն այն վարկաբե-
կութիւնը, զոր իրենց իսկ կը հասցնեն
անոր: Սեմ ներքը որ չգիտնան՝ թէ ես,
հնուստ մը, գործ չունիմ ու չեմ կրնար
ունենալ արդի եկեղեցեաց հետ իմ ուսում-
նասիրութեանց մէջ, որոց նիւթ անցնայն
է միայն, ուստի և այն հայ եկեղեցին՝ որ
կ'ապրի պատմութեան մէջ, ու չի խորշի

պատմութենէն. որուն խօսեցան Գրիգորներու ու Սահակներու լինոր զաւակն եմ ես ինքս, և չեմ կարօտիր Պեհրու դատաստանին կամ հակակշռին՝ անոր ճննութեան և ուսումնասիրութեան մէջ. Պեհրու՝ որ անոր ստորգ ծանօթութենէն մղոններով հեռի կ'ապրին ու կ'ուզեն ապրիլ: Այդ հին եկեղեցիին կը նկարագրեմ, անոր իսկական պատկերը կը գծեմ, էւ այն բոլոր հայորդիք՝ որ կը հետաքրքրուին անով ու կը սիրեն զայն անկեղծօրէն ու պարզօրէն, կը հրճուին ի տես իմ նկարաբերութեանց, և անոնք մէջ կը տեսնեն «Հմուտ, շահեկան, հմայիչ, վարպետի գործեր», նոյն իսկ առանց զննութեան իմ դաւանական դրօշիս ներքեւ:

Պեհրն ալ կը սիրեն այդ պատմական եկեղեցին: Ո՛չ, չեն սիրեր: Եթէ սիրէին, չպիտի խրաչէին անոր իրական դէմքէն, չպիտի բողոքէին անոր մերկացման դէմ: Իրենց բողոքն՝ իմ կողմանէ սխալ պատկերացման մը դէմ չէ, — ու Պեհրը չպիտի կարենան վկայել զայդ, և իրենց խեղճուկ իբր քնները հաստատական իմաստ ունին բանասիրական դաշտին վրայ, — այլ նոյն ինքն ճշմարիտ պատկերացման դէմ, ինչ որ հրապարակային յայտարարութիւնն է ան. սրբութեան նոյն եկեղեցւոյն հանդէպ, թող չսիրեն զայն. իրենց գիտեն. ամէն մարդ տէր է իւր սրտին: Բայց անհեթեթ է պահանջել ինձմէ, հնախօս բանասիրէ մը, որ Պեհրու հաճոյանալու համար՝ կամ խեղաթիւրեմ անոր կերպարանքը, — վատութիւն մը՝ որ իմ արուեստս չէ, — և կամ հրաժարիմ հայ սրբազան հնախօսութենէն՝ որ իմ մասնագիտութիւնս է, և որոյ աւրձնական ճիւղն, կերպական բանասիրութեան կարեւորագոյն մասերէն մին կը կազմէ այսօր: Մի՞ գրեք, կ'ըսեն ինձ: Ո՛ր կ'ապրինք, ո՞ր դարու մէջ: Էւ այդ պահանջը կու գայ այն քաղաքէն՝ ուր համիտեան գրաքննութիւնը կ'իշխէր երէկ, և չէր ներել՝ որ մեր աչքերը դարձնէինք բնա մեր ազգային անցեւոր. իսկ հիմայ՝ այդ արգելքը դնել կը փորձուի մեր կրօնական անցեւորին դէմ, և Հայերէ՛ն կը հաս-

կնաք. Պոլսէն, հայ գրականութեան երեկի — եթէ կ'ուզէք հաւատալ՝ նաեւ այս օրուան — կեղբոններէն մէկէն, և — ուշ գրէք — խմբագրապետներէ՛, հայ մտքին առաջնորդներէ՛: Այդ չի բաւեր, կրօնական ատելութեան խարոյկներ ալ կ'արծառնուին այն քաղաքին մէջ, կամ այլուր՝ զաւակներէն այն քաղաքին, որ երբեմն կրօնական անհերոգութեան պատրաստած տխրասարսուռ տեսարանաց թատերավայրը հանդիսացաւ: Անցան գնացին այն դարերը, բարեկամներ, և խղճի ու մտքի ազատութեան դարը կ'ապրինք հիմայ, մինչ ձեր խմբագրականներէն տակաւին հին ոգին կը հտորի: Այս դարուս՝ Հայոց ազգին քաղաքին անձին կամ ժամանակին փոփոխութիւնը պատմաքննութեան կողմանէ, կամ հայ ժողովրդեան 12 դար հայրապետական ընտրութեան մասնակցած չի նեղու տեղեկութիւնն՝ ոչ մէկ ֆիաս կը բերեն ազատ խղճերու, և մեծ օգուտ ազատ մտքերու՝ որոց հետ է միայն բանասիրութեան պաշտօնն ու գործը, և ոչ լուրեր վաճառող թերթերու կամ անոցմով անանող ամբօխին հետ:

Կ'ըսենք, կը կրկնենք, կ'երեքկնենք, անցեալն ու ներկայն իրարու ցով կանգնած կ'աղաղակեն մեզ հետ, և դեռ չենք յաջողիր հասկացնել սա մեր պոլսեցի մտադրականաց՝ — ինչ գեղեցիկ բառ — թէ ժամանակի անիւր կը թաւալի անդուր, կը կոխէ կ'այլափոխէ ամէն բան, և իւր ետեւ կը թողու դարաշրջաններ բոլորովին տարբեր կերպարանք քան զոր մեք կ'ապրինք: Ու մեք պատմագէտք կը նայինք այդ անցած շրջաններուն, անոնց ծանօթութեամբ կը լեցնենք մեր միտքն ու մեր հատորները, հնախօսութիւն կը կազմենք, ժամանակի անիւ, այլափոխութիւն. այդպիսի բաներ չենք ընդունիր, չենք ուզեր լսել, ձայն կու տան մեր պոլսեցի մտադրականք. — ինչ գեղեցիկ բառ: — Մեր խորհելու կերպը սակայն տարբեր է: Անցեւորին զանազանութիւնը չտեսնելով կամ տեսնել չուզելով, անցեալը ներկային հաւասարած չի լի-

ներ: Ոչ ալ տեսնելով զայն, պարտաւոր կը լինինք մեք անոր վրայ ձեռն մեր արդի կեանքը, ինչպէս պոլսեցին կը կարծէ միամտօրէն: Կարող ենք առնուլ ինչ որ կայ անոր մէջ պիտանի և վայելուչ՝ ի շահ և ի զարդ ներկայիս, և կը թողունք զրքերու մէջ ինչ որ տարածամ և աւելորդ է մեզ: Զոր օրինակ, որովհետեւ մեր եկեղեցւոյ երիցագոյն դարերուն հայրապետական ընտրութիւնը կատարուեր է մեր թագաւորաց և իշխանաց ձեռքով, մեք զայդ լսելով, միթէ հայ թագաւորներ և իշխաններ պիտի ստեղծենք՝ ընտրութիւնը վերստին անոնց ձեռքը յանձնելու համար. կամ պէտք է ծածկենք այդ պատմական իրողութիւնը, որովհետեւ չենք կարող հայ թագաւորներ և իշխաններ ստեղծել. կամ ամօթ է, նախատինք է գիտնալ՝ թէ անոնք եղեր են երբեմն ընտրող. կամ եթէ նախատինք մը կայ աղոր մէջ, մեք տուեր ենք ընտրութիւնն անոնց ձեռքը և մեք կրելու ենք ամօթը: Պոյսոյ սա խմբագրաց դատելու եղանակը, սա տազնապն անցեալէն, և հնախօսութեան պարզամիտ շփոթումն ազանդատարանն հետ, զոր ստէպ կը կրկնէ Ազգաբարձը, ցուցնելու համար իւր անծանօթութիւնն առաջնոյն և ընտանութիւնն երկրորդին հետ, ծիծաղելի է, այլ կարեկցելի:

Այո՛, կան ժամանակի անուէն կատարուած ինչ ինչ այլափոխութիւնք ալ, որ կրնան ստուեր մը ձգել ներկային վրայ, և պարտականութիւն զնն ՚հինի դառնալու. ինչպէս են աստաւարանի և նախկին հայ եկեղեցւոյ վարդապետութենէն օտարացումները: Հոգ բաղձալի էր ամէն քրիստոնէայ խղճերու, և աւետարանի ոգին իսկ կը ստիպէ՝ որ հին ու նոր հայ (ինչպէս և բոլոր) եկեղեցիք իրարու հետ ներդաշնակ լինին: Սակայն հինը նորին չի կըրնար հաւասարել. այն ինչ որ եղած է անգամ մը՝ եղած է: Զայն նորին մօտեցնելու համար՝ պէտք է կամ հին սերունդները գերեզմանէն հանել ու փոխել անոնց ուղեղները, կամ կրախ տալ անոնց թողած ամբողջ մատենագրութիւնը, կամ՝

ինչպէս ոմանք դիւրին գտան և ի գործ դրին՝ — այլափոխել պատմութիւնը, որ խայտառակութիւն է: Հետեւաբար եթէ անվրէպ կ'ուզուի հաւասարութիւնը, նորը մօտենալու է հինին: Եւ այդ մերձեցումն՝ հինը խօսքով սրելով և արդեամբք առելով ու քողարկելով չի լինիր: Բայց հոգ ալ գործ չունիմ ես. ճաշակի հարց է: Այլ միայն կ'ուզեմ պնդել՝ թէ հինին ու նորին կարծեցեալ հաւասարութիւնը ցնորք է, և թէ հինին ուսումնասիրութեան մէջ բանասիրական արուեստին ինձ սուած ազատութիւնն անբռնաբարելի է և պիտի մնայ՝ կրօնամոլութեան դիմակին տակ ի գործ դրուած ամէն անազնիւ յարձակում. ներէ:

Այս սկզբան վրայ կը շեռտէի վերջին տրամաբանականիս մէջ, «Անկեղծութիւն պատմութեան հանդէպ» վերնագրով (Բգմ. 1929, 193), որ բաւական էր համոզելու ընդդիմադիրներէս ողջամիտները, և կարելիու կամակործները: Ամենուն յարմար բաժինը կար հոն՝ անցելոյն, ներկային և ապագային համար: Երկու պոլսեցիներ, մին՝ ներսէն և միւսը՝ դրսէն, պատասխանելով զգացողին՝ թէ ի գուր կ'աշխատիմ ողջմտութեան ու գիտութեան լեզուին ընտելացնել զիրենք: Նոյն քաղաքէն քահանայ մ'ալ, գոհացում տալու համար իւր մէկ բարի պաշտօնակցին «նախանձախնդրութեան», — Պոյսոյ մէջ նախանձախնդրութիւնը բանասիրութեան տեղ կ'անցնի, — և առաքելականութեան մասին իմ յօդուածոցս «հազիւ մէկ երկու քէն հանդիպած (և զանոնք անգամ չհասկացած) ըլլալով հանդերձ», — իմ տեղս ինք ամբաստանիչ դարձաւ իրեն, — չվաբանեցաւ իւր մտքին լերկութեան վրայ ցցել քանի մ'օտարամոյր փեսուներ, և ցատկել երեսիս՝ տեղւոյն կրօնաթերթին մէջ, ապացոյց մ'աւելի տալու համար՝ թէ ինչու հայ քահանային արգիլուած է վարդապետել:

Չպատասխանեցի ոչ միոյն. որովհետեւ ընթերցողներս տեսան և գիտեն՝ որ ես լրագրական թեթեւ վիճաբանութեանց

ոչ կոչուցն ունիմ, ոչ ակորժակ, ոչ ժա-
մանակ: Բանասիրի յատուկ գործ չէ այդ,
այլ լրագրաց՝ որ ամէն օր լայն լայն էջեր
պիտի մրոտեն: Միայն ցանցառարար կ'ե-
րեւիմ, կը ստիպուիմ երեւիլ, երբ լեզու-
նեբը բերաններէն չափազանց զուրս կ'ըն-
կնին, և կը հրաւիրեն զիս թիչ մը ներս
ամփոփելու զիրենք՝ յօգուտ հասարակաց:
Աշխարհիս վրայ ամէն բան ամենուն հա-
մար չէ. և ես սա պոլսեցի ընդդիմախօս-
ներս ընթերցողացս կարգին մէջ երբեք
հաշուած չէի: Իրենք զիրենք զրին անոնց
մէջ, Եւ իրաւամբ հաշուեցի այնպիսի
մարդիկ, որոնք հնախօսական աշխատու-
թեանցս մէջ «գեղնած ու փռոտած թրդ-
թեք» կը տեսնեն. ինչպէս պիտի տեսնէին
Բրազիլի բնիկներն ալ, եթէ մտնէին և

ակնարկէին մեր գրատանց մէջ դիզուած
հատորներուն: Չեմ մեղադրեր, այլ կը
կրկնեմ, ամէն բան ամենուն համար չէ.
ինչպէս ինձ համար ալ չեն Պ.ի խմբա-
գրականներն ու Մեք խօսքերը, և ես չեմ
կարդար զանոնք, բայց միայն երբ ինձ
ցոյց կու տան անոցմէ մին կամ միւրը՝
որ կը հրաւիրէ զիս կարդալ, լաւ կ'ընեն
ընդդիմախօսներս ալ չկարդալ իմ գրած-
ներս: Ազոյ՛ խղճերնին չի պղտորիր, չդեր-
նին չեն գրգռուիր, հանգիստ կը քնանան,
և զիս ալ չեն ստիպեր կրկնել. կօշկա-
կարը կօշկեն վեր չ'ընէ՛:

Այսքանը բաւական թող համարին քե-
նադատներս՝ անցելոյն և ապագային հա-
մար:

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

Հ Ո Պ Ի Խ Մ Ը

ՆՈՒՆԻՐ՝ Ա. ԳԱՐԻՊԵԱՆԻ

Լայնատարած դաշտերու լըռութեան պէս ահաւոր,
Ես կը սիրեմ անգունդին ցաւին ճիւղերը բոլոր.
Ես կը տենչամ որ կուրծքիս փոթորկին հեռ տառապի
Անապատի աւազին անսանձ սուլումը մեծդի:
Ես կը տենչամ ըմբոշխնել միայնութեան հոգիին
Կապոյտ յոյգերը նընջող, և սեւ սարսափն անհունին.
Ճախրել բարձունքը լեռան, և այդ մրուայ կատարէն
Դիտել վէրքերն երկնքին ուրկէ շանթեր կը ժայթքեն.
Ապրիլ, հրեմուանքը մոռցած, հոն, ուր անդորրն իսկ կրնայ՝
Սարսափի շիթ մը խառնել հոգիիս մէջ հեւամազ:

Դիտել անփոյթ, երբ հովերն ամպերն առած կը տանին,
Երբ կայծակին պոռթկումէն կը պայթի կուրծքն երկնքին.
Երբ բընութիւնն յաղթըւած իր ոյժերէն վիթխարի՝
Հըպարտ սրտի մը հանգոյն իր արցունքով կը յուզուի:
Վշտի՛ դաւակ, հովիտներն ու առուակներն երազուած,
Ջախջախ պատեր մատուռի, և նոճիներ սրբացած,
Յաղթ կաղնիներ, որոնց տակ հոգիս երկամբ կը խոկար՝
Չօրօրեցին վայրկեան մ'իսկ այս իմ ցաւերն հոգմավար,
Դողդոջ քայլերս չըզլտան ո՛չ մէկ դաւար արահետ.
Ես կը բաղձամ նոյնանալ բընութեան մեծ վշտին հետ: